ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 26.08.2016թ. ԹԻՎ 379-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

20 սեպտեմբերի 2016թ,
ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Չիլինգարյան — ՊԳՀԾ պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Ա.Խաչատրյան — ԻԾ պետ

Ա. Գալստյանց — ՖՏԾ առաջատար տնտեսագետ ծախսերի հաշվառման

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Եսայան — Գնումների համակարգող

ՕՐԱԿԱՐԳ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը ՝ մեկ թվով արտահայտված՝ 700 000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակցի անվանումը և գտնվելու հասցեն՝
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
ա) Վերոնշյալ կազմակերպության կողմից ներկայացված ծրարը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:
Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:
բ) Վերոնշյալ կազմակերպության կողմից ներկայացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:
Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:
Հայտարարվեց մասնակցի գնային առաջարկը՝
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ ՝ 54 000 (հիսունչորս հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ, մեկ ծառայության համար:

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը:

2. 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցել սույն արձանագրությունը ուղարկելու միջոցով՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:
Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:
3. Հանձնարարարել գնման համակարգողին ներկայացնել հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
4. Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 29.09.2016թ ժամը 14.30:

Վ.Չիլինգարյան — Հանձնաժողովի նախագահ

Ա.Խաչատրյան — Հանձնաժողովի անդամ

Ա. Գալստյանց — Հանձնաժողովի անդամ

Մ. Եսայան — Հանձնաժողովի քարտուղար